

հագին քանակութիւն մը՝ շարժելով ծովուն անընդհատ շարժմունքէն, որով գրեթէ առանց ծախուց։ Պէտք է ասկից վերջը ջանան ճարտարագէտք կատարելագործել ելեկտրականութեան այս նոր և զարմանալի գործադրութիւնը։

Փասդէօռեան հաստատուրիւն։ — Այս հաստատութեան ընդհանուր գումարումը տեղի ունեցաւ ներկայ տարւոյս մարտ 25ին, Քարտուղարը քրոֆ. կրանչէ յետ ծանուցանելու ընկերութեան գրամական փիճակը, այլ և այլ հաստատութեանց գլխաւորաց գիտական տեղեկագիրները կարդաց։ Հան կատաղութեան դէմ եղած դարմանը այլ ևս խնդիր չի վերցնէր. 1890ին. 1546 խածուած անձինք դարմանուեցան։ այս թուէն միայն 10 անձինք մեռան, յորոց վեցը դարման ընդունելէն 15 օր վերջը, իսկ չորսն ալ այս 15 օրէն վերջը, կատաղութեանէ զատ, Փասդէօռեան հաստատութեան բըմիկը միկրոպարանական խուզարկութեանց կ'զբաղին փոխադրական հիւանդութեանց նկատմամբ։ Այս հաստատութիւնը՝ մեծ հոչակ հանեց ընդ բովանդակ աշխարհ։ աշխարհիս ամեն կողմէն աստ կու դան դրութիւնը ուսանելու համար. այժմ ութսուն գաղղիացի և օտար զիտնականք կ'ուսանին՝ ներկայ լինելով հոչակաւոր դիմանականին դասախոսութեանց։ Ամէն ազդի ուսումնաթերթք, կը յարգեն այս գաղղիացի գիտնականին աշխատութիւնը։

### ԹՂԹԱՑՈՒԹԻՒՆՔ ԲԱԶՄԱՎԱՐԻ

- ԿԱՐԻՆ. Վ. Գ. Ընդունեցանք թէ նամակները և թէ յօդուաները. առանձին թղթով կը պատասխանենք։
- ՆԻՒԲՈՐԴ. Պ. Գ. Սաացանք բաժնեգինը. կանոնաւորապէս պիտի ընդունեք թերթերը. ցուած խորհուրդնիդ կը գործադրէնք։
- ԳՈՒԹԱՑԻՍ. Յ. Ս. Ընդունեցանք բաժանորդագինը և նամակը. թղթով կը պատասխանենք։
- ՆՈՐ-ԵՈՐՔ. Մ. Ս. Գ. Հաճելիք է Խմբագրութեանս Զեր առաջարկած անձը. առանձ կ'ուղենք թերթերը։
- ՆՈՐ-ՆԱԽԻԶԵԽԱՆ. Ս. Զ. Կ'ընդունեիք քիչ առենէն ինդրածնիդ. ըստ կարելոյն փութով անցունեիք մեզ բաժնեգինները։
- ՍՈՅԻԱ. Ս. Ա. Սաացանք բաժանորդագինը. Զեր նշանակած հասցէին կ'ուղարկենք թերթերը։
- ԱՄԱՍԻԱ. Բ. Բ. Զեր գրուածքն ստացանք. առթով մը թերեւ հրատարակենք։
- ԴԵՀԵՐԱՆ. ՌԱՖ. ԸՆԿ. Սաացանք բաժանորդագինը. պիտի ընդունեիք թերթերը։
- ՌՈՍՏՈՎ (ԴՈՆԻ ՎԵՐԱԾ). Մ. Ռ. Թ. Շնորհակալութեամբ ստացանք բաժնե. գինները. առանձին նամակաւ կը պատասխանենք։